




3 Մեր երազանքի նախարարությունը



5 ԱՍՏ-ն գնահատում է ՀՀ ԱԻՆ ձեռքբերումները



6 գազալցակայանների գործունեությունն արգելվում է



7 «Իմ քաղաքը պատրաստվում է»



ISSN 1829-149X 13009 9 771829 149003

արտակարգ թերթ

N 9 (473) 22.3.2013 -28.3.2013 www.emergency.am

Երեք տարի արտակարգ իրավիճակներում Լրացել է ԱԻ նախարար Արմեն Երիցյանի պաշտոնավարման երեք տարին

«Արտակարգ թերթի» այս համարն ամբողջությամբ նվիրվում է ԱԻ նախարար Արմեն Երիցյանի պաշտոնավարման 3-ամյակին: Թերթի առանձին էջերում կներկայացվեն ԱԻՆ կայացման առաջնային իրադարձությունները:

Շարքայինից մինչև գեներալ Իրավապահ իրավաբանական գիտությունների դոկտորը

Կենսագրություն
Արմեն Երիցյանը ծնվել է 1960 թ. Երևանում:
1979-1981 թթ. ծառայել է ԽՍՀՄ Չինված ուժերում:

1982 թ. օգոստոսից սկսել է ծառայել ներքին գործերի համակարգում:

1984-1986 թթ. սովորել է ԽՍՀՄ ՆԳՆ Կալինինգրադի միլիցիայի միջնակարգ մասնագիտացված դպրոցում: 1987-1990 թթ. ուսանել է ավարտել է ԽՍՀՄ ՆԳՆ Կոլոզոգրադի բարձրագույն ֆինչական դպրոցը եւ ծառայությունը շարունակել Երևան ֆաղախի ՆԳ վարչության ֆրեսկան հետախուզության բաժնի օդերիլիազորի, ավագ օմերիլիազորի, աղա եւ բաժանմունքի ղեկավար տնօրեններում:

Ծառայության ընթացքում զբաղեցրել է մի շարք ղեկավար տնօրեններ՝ Խորհրդային ՆԳ բաժնի ղեկավար, Կոստայի մարզային վարչության ղեկավար, Կազմակերպման հանցավորության դեմ թաղանթի գլխավոր վարչության ղեկավար, Նույն աղ վարչության ղեկավար, Նույն աղ վարչության ղեկավար:

2001 թ. նշանակվել է ՀՀ Ներքին գործերի նախարարի տեղակալի, իսկ 2008 թ.՝ ՀՀ ոստիկանության ղեկավարի տնօրենի տեղակալի տնօրենի:

2010 թ. մարտի 16-ին նշանակվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար: 2012 թ. հունիսի 4-ին վերանշանակվել է ՀՀ ԱԻ նախարարի տնօրեն:

2000 թ. ՀՀ Նախագահի հրամանագրով տարգետանակալ է Արիության մեդալով, 2006 թ.՝ «Հասարակական կարգի գերազանց ղեկավարման համար» մեդալով եւ Նույն թվականին, ԼՂՀ Նախագահի հրամանագրով տարգետանակալ է «Միջառն Գո» մեդալով, 2012 թ. ղեկեցնելին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով տարգետանակալ է Մարտական ծառայության մեդալով:

Իրավաբանական գիտությունների դոկտոր է, 13 մեծագործությունների, 100-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է, 3 միջազգային իրավական ակտերի ժողովածուների համահեղինակ: Գիտությունների առաջնային ակադեմիայի ակադեմիկոս է Երևանի ղեկավար համալսարանում եւ կառավարման ակադեմիայում: Ամուսնացած է, ունի երկու երեխա եւ երեք թոռնիկ:

Երբ դեռ ընդամենը 100 օր էր անցել

2010 թ. մարտի տասնվեցին ՀՀ վարչապետը Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներին ներկայացրեց Նոր նախարարի՝ ոստիկանական համակարգում բարձր համարում ունեցող, ոստիկանության գեներալ-մայոր Արմեն Երիցյանին: Այդ օրից անցել է ուղիղ հարյուր օր: Ժողովրդական ասույթ կա. օր կա՝ տարի է կերակրում: Արտակարգ իրավիճակներում օրերը ժամերով չեն հաշվվում, վարչականներ կան, որ տարիների էներգիա են խլում, պահեր կան, որ քարանու են ժամանակի մեջ, ու ժամանակի հոսքը ինչ-որ տեղ հեռվում է: Իսկ, երբ այդ ժամանակն անձնապես քեզ է պետք, այն սլանում է ինչպես սամուր: Դժվար է ժամանակագրություն սահմանել, երբ այդ անչափելի օրվա մեջ ամենացորդ դրվում է կյանքի օրը՝ առավոտյան ուրիշ մինչ անվերջանալի երեկ:

Արտակարգ իրավիճակներում օրերը ժամերով չեն հաշվվում, վարչականներ կան, որ տարիների էներգիա են խլում, պահեր կան, որ քարանու են ժամանակի մեջ, ու ժամանակի հոսքը ինչ-որ տեղ հեռվում է: Իսկ, երբ այդ ժամանակն անձնապես քեզ է պետք, այն սլանում է ինչպես սամուր: Դժվար է ժամանակագրություն սահմանել, երբ այդ անչափելի օրվա մեջ ամենացորդ դրվում է կյանքի օրը՝ առավոտյան ուրիշ մինչ անվերջանալի երեկ:

Աղետաշաղկերի կարիքներին համահունչ հզոր Նախարարության տեսլականը

Հենց առաջին օրվանից սկսվեցին նախարարի ճանաչողական այցերը ծառայություններ ու գործակալություններ, եւ գլխավոր ուղերձը, որ շարքայինից մինչև գեներալ, տեխնիկից մինչև տնօրեն, հասցնում էր նախարարը, արտակարգ իրավիճակների հզոր ու կառուցիկ, բազմաթիվ մարտահրավերների առաջ կանգնած երկրի կարիքներին համահունչ, տեխնիկապես հագեցած, պրոֆեսիոնալ ու նվիրված անձնակազմ ունեցող նախարարության տեսլականով էր հագեցած:

Նախարարությունը երկու տարի առաջ էր կազմավորվել: Սակայն նրա կազմի մեջ մտնող ծառայություն-գործակալություն-ՊՈՒԿ-ները գործում էին առանձին, ամեն մի ՊՈՒԿ իր հետաքրքրություն-շահերն ուներ, եւ միշտ չէր, որ դրանք համընկնում էին նախարարության շահերին:

Մի կողմից՝ անկասելի ձգտում դեպի արտակարգ իրավիճակների ռուսական ու եվրոպական հանրաճանաչ կառույցների երազելի մակարդակ, մյուս կողմից՝ անարդյունավետ կառավարում, կադրային, գործառնության, նույնիսկ համակարգային կրկնություններ, շենքային անմխիթար, առանձին դեպքերում՝ անարդյունավետ պայմաններ, սեփական ու պետական շահերի անհավասար պայքար, տեխնիկական թույլ հագեցվածություն, նորագույն տեխնոլոգիաների համատարած բացակայություն, հնարավորության սահմաններում՝ այլոց գրպաններին ակնադրում, իրավական՝ տեղ-տեղ ակամապատ դաշտ:

Շարքայինից գեներալի կոչման հասած նախարարը, գործի ղեկավար տարիներով հղկված կառավարման իր փորձն ու հնտությունները, բարդ պայմաններում երկար ու արդյունավետ աշխատելու կարողությունը, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու եւ օպերատիվ որոշում ընդունելու ունակությունը, առանց ընկրկելու մեծ ու փոքր խոչընդոտների առաջ, ամենատարբեր ուղղություններ մարտավարական



բազմաթիվ վստահ քայլերով սկսեց իրականացնել ժամանակին համահունչ, աշխարհի հետ համաքայլ հզոր նախարարության շինարարությունը, նաեւ՝ բառի բուն իմաստով: Ուժեղ, հզոր, կառավարման արդյունավետ բուրգ, բոլոր գործակալությունները համակարգված՝ մեկ տանիքի տակ:

Երբ նախարարն ընդամենը մեկ շաբաթ անց հայտարարեց Դավթաշենում բոլոր ծառայությունների համար ստեղծվելիք արտակարգ իրավիճակների նախարարության շենք-կառույցների համալիրի մասին, ուղղաթռվածի իրապարակներով ու բազմաթույթ տեխնիկայի հավաքատեղիներով, նորագույն տեխնոլոգիաների հագեցվածությամբ, եւ խոստացավ հիմնական անձնակազմով մինչև սեպտեմբեր տեղափոխվել այնտեղ, քչերը, եւ միայն նրան մոտիկից ճանաչողները հավատացին, որ տեսլականը միս ու արյուն է ստանալու, որ շատերիս երազանքը՝ ՄՍՍ-ի պես հեղինակավոր նախարարություն ունենալու, իրականություն է դառնալու:

Ամենաարագ տեսլերով, մանրակրկիտ մշակվեց ու կառավարություն ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի բարեփոխումների հայեցակարգը», որով նախատեսվում է՝

- հստակեցնել նախարարության եւ նրա համակարգի մարմինների գործառնություններն ու խնդիրները, կառուցվածքը, կատարել նախարարության վարչական ապարատի եւ ողջ համակարգի մարմինների օպտիմալացում:

- միջառն կրկնող ստորաբաժանումները միավորել, առավել արդյունավետ օգտագործել նախարարության համակարգի կադրային, մասնագիտական, նյութատեխնիկական ռեսուրսները, հնարավորինս կենտրոնացնել, պարզեցնել եւ հստակեցնել ֆինանսական ու նյութատեխնիկական միջոցների ստացումը, բաշխումը, նվազեցնել ծախսը՝ տնտեսված գումարներն ուղղելով նախարարության խնդիրների իրականացմանը:

- նախարարության բոլոր ստորաբաժանումները տեղակայել մեկ վարչական շենքում՝ կառավարելիությունը եւ գործունեության օպերատիվությունը բարձրացնելու նպատակով:

նումները տեղակայել մեկ վարչական շենքում՝ կառավարելիությունը եւ գործունեության օպերատիվությունը բարձրացնելու նպատակով:

- նախարարության համակարգի պետական ոչ առետորային կազմակերպությունները եւ փակ բաժնետիրական ընկերությունները համընկ նախարարության անմիջական ենթակայությանը՝ դրանց կառավարումն ու գործունեության արդյունավետությունը, ֆինանսական եւ նյութատեխնիկական միջոցների նպատակահարմար օգտագործումը բարելավելու նպատակով՝ կոլեգիալ կառավարման մարմիններ ստեղծելու եւ օպտիմալացնելու միջոցով:

Նախարարության ամենահզոր ու տարածաշրջանում ճանաչում ունեցող կառույցը՝ Հայաստանի փրկարար ծառայությունը, որը վերջին շրջանում լուրջ առաջընթաց էր ապրել, միանգամից հայտնվեց նախարարի քննախույզ տեսադաշտում: Նախարարը եղավ բոլոր ստորաբաժանումներում, համարյա բոլոր հրշեջ-փրկարարական ջոկատներում, ծանոթացավ մարդկանց հետ, նրանց շենքային պայմաններին, տեխնիկական հագեցվածությանը, հետաքրքրվեց նրանց աշխատանքով, առօրյայով, խնդիրներով, դարձ ու ցավով, աշխատավարձով, տրամադրություններով:

Բայց միայն ճանաչողական չէին նախարարի այցերը: Նոր էր նշանակվել, երբ Դիլիջան-Իջեան սողանքը կազմալուծեց հաղորդակցությունը Տավուշի մարզում, ընդհանրապես այս տարին առատ էր տեղումներով ու դրանց հետևանքով ակտիվացող սողանքներով:

Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղի մոտ առատ տեղումներից հետո Արաքսն էր սպառնում ճեղքել տեղի տված ափապատները եւ ջրածածկել գյուղատարածքները: Դեպքի վայր ուղարկվելով փրկարարներին, ոտքի հանելով գինվորականներին, Արմեն Երիցյանն անմաք մեկնեց դեպքի վայր՝ դեկավարելով ափապաշտպան գործողությունները:

Դրանից մի քանի օր առաջ «Թաֆուն» էր խռովել հանրապետության ամբողջ բնակչության անդորրը, երեխաների հանգստին ու զվարճանքին ծառայելու կոչված կարուսելը, վթարվելով, վնասել էր երեխաներին, բարեբախտաբար՝ ոչ այնքան ծանր հետևանքներով: Նախարարի համձնարարությամբ ամբողջությամբ ուղարկվեց ոլորտը, բացահայտվեց անմխիթար վիճակը, բայց միայն սեփականատերերը չէ, որ պատժվեցին: Ուսումնասիրվեցին տեխնածին վթարների ռիսկի նվազեցման ուղղությամբ ԱԻՆ ՏԱԿ-ի կատարած աշխատանքները, այդ ոլորտում տեղ գտած թերություններն ու օրենսդրական բացթողումները: Իրականացվեց գործառնությունների վերաբաշխում: Արտադրական վտանգավոր օբյեկտների հետ կապված հարաբերությունները կանոնակարգելու նպատակով Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Տեխնիկական անվտանգության



Երեք տարի արտակարգ իրավիճակներում Լրացել է ԱԻ նախարար Արմեն Երիցյանի պաշտոնավարման երեք տարին

<<< 1 ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու փաթեթը: 33 փորձապետի հանձնարարականով Ազգային կենտրոնում օպտիմալացման գործընթաց է իրականացվում: Ընդհանրապես բոլոր ՊՈԱԿ-ներում նախատեսվում է կառավարումը հանձնել կոլեգիալ կառավարման մարմիններին:

Օրինակ, սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը բաղկացած է գործակալությունից և չորս պետական ոչ առևտրային կազմակերպություններից: Օպտիմալացումից բացի, շրջանառության մեջ դրվեց «Սեյսմիկ անվտանգության ապահովման հայեցակարգ», որի իմնական նպատակը սեյսմիկ ռիսկի նվազեցումն է՝ դրան ուղղված պետական քաղաքականության իրականացման ու բոլոր մարմինների գործառնությունների և մեխանիզմների հստակ աահանմամբ:

Մեր երկրի նման Սեյսմապտանգ երկիրը հզոր փրկարարական, արձագանքման ծառայություններ պիտի ունենա և հզոր ու տեխնիկապես հագեցված սեյսմիկ ծառայություն, - համախ է կրկնում նախարարը:

Լինելով գիտնական, նա շատ լավ ու հստակ է պատկերացնում գիտնականների տեղը ու դերը արտակարգ իրավիճակների ռիսկերի կառավարման ոլորտում՝ աղետներից երկրի խոցելիությունը նվազեցնելու, աղբյուրները կրճատելու, երկրի բնականոն զարգացումն ապահովելու գործում: Եվ նախարարությանը կից գիտական խորհուրդների ստեղծումը նպատակամղված է ոլորտի զարգացման ծրագրերի մշակմանը, գիտությունը մարդկանց անվտանգությանը ծառայեցնելուն, եղած միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործմանը: Ընդ որում՝ նախարարը ժամանակ է գտնում նրանցից յուրաքանչյուրի հետ զրուցելու, ծանոթանալու նրանց հայտնագործություններին,



Ծեռքբերումներին, կարիքներին: Առայժմ միայն մեկ փակագիծ բացեց:

Մոտ տասը օր առաջ նախարար Արմեն Երիցյանը մի խումբ գիտնականների հետ ուղեորվեց Գառնի: Այստեղ դեռ խորհրդային տարիներին սեյսմոլոգիական հզոր դիտակայան էր ստեղծվել, որն անկախացումից հետո իր ամբողջ հնարավորություններով չի օգտագործվում: 375 մետր երկարություն ունեցող այս բունելի նմանը, ինչպես բացատրեցին հայ գիտնականները, աշխարհում այլևս չկա, այն հնարավորություն է

տալիս գրանցելու երկրի մակերեսային նույնիսկ ամենամանջան, 0,01 մմ դեֆորմացիաներն ու տատանումները, այստեղ է տեղադրված նաև IRIS համակարգը, որի միջոցով ստանում և մշակում են տեղի ունեցած երկրաշարժի նախնական տվյալները:

Գառնիի սեյսմիկ կայան կատարած այցելությունը սկիզբն է նոր նախագծի, ըստ որի ԱԻ նախարարությանը կից պիտի ստեղծվի գիտական կենտրոն, որի մեջ ներգրավվելու են տարբեր գիտահետազոտական ինստիտուտներ, սեյսմոլոգներ, երկրաֆիզիկներ ու այլ մասնագետներ: Հիմնական նպատակը սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելն է: Իսկ Գառնիի սեյսմիկ կայանը նախատեսվում է հզորացնել ու վերագործարկել իր ամբողջ հզորությամբ:



Ինչպես հավաստիացնում են գիտնականները, դա սեյսմոլոգիայի ոլորտում լուրջ առաջընթաց կլինի համաշխարհային մակարդակով:

Գիտական մտքի, մարդկանց անցած ուղու, նրանց ավանդի, կենսափորձի նկատմամբ խոր հարգանքը հող էր նախաստորապետել նախարար Երիցյանի հաջորդ քայլի համար: Հայաստանի փրկարար ծառայության վետերանների խորհրդի հիման վրա ստեղծվեց ԱԻՆ վետերանների խորհուրդը: Հանդիպելով վետերաններին՝ նախարարը խոստացավ աջակցել նրանց իրենց նախաձեռնություններում, ինչպես նաև ամենատարբեր խնդիրներում, իսկ հետո սկսեց կյանքի կոչել իր խոստումները: Ավագ սերունդին միայն տոների ժամանակ չէ, որ պետ է հիշեցնել, նրանց մասին հոգածությունը պետք է սովորական դառնա, քանի որ «Նա, ով չի հարգում իր անցյալը, չի կարող ապագա ունենալ» քարին փորագրելու պես մշեց նախարարը: Ավելի քան հազար վետերանների շատ-շատերն իրենց նոր երիտասարդությունն են ապրում, ոգևորվածությունը շատ մեծ է: Նրանք խոստացան իրենց բոլոր ուժերը ներդնել արտակարգ իրավիճակների համակարգի զարգացման գործում՝ մեր երկրի բնակչության պաշտպանության համար:

Նախարարի պաշտոնում նշանակվելուց հետո Արմեն Երիցյանի առաջին նամակագրություններից մեկը ռուսաստանցի իր գործընկեր Սերգեյ Շոյգուին ցավակցելն էր՝ Մոսկվայի իրդեհաշիջման շտաբի ղեկավարի գոհվելու կապակցությամբ: Աշխարհով մեկ տեղի ունեցած ծանր հետևանքներով խոշոր իրդեհների դասերը վերլուծելով՝ նա խստորեն իրահանգեց ԱԻՆ

ՀՓԾ իրդեհային պետական տեսչության աշխատակիցներին՝ ամեն ինչ անել, որ մեզ մոտ չարձանագրվեն մանատիպ ողբերգություններ:

Հրդեհային պետական տեսչության աշխատակիցներն սկսեցին այցելել մատենադարան-օպերապատկերասրահ-մարզահամերգային միջնաբերդի զվարճանքի վայրեր, ուսումնական հաստատություններ: Իսկ մի շաբաթ առաջ հայտարարվեց հակահրդեհային քարոզչության միասնակ: Հասարակաշխույթյան հետ կապերի, բնակչության հետ հետադարձ կապի արդյունավետ եղանակ էր նախարարի անմիջական հսկողության տակ գտնվող թե՛ զծի ստեղծումը, որով մինչև հիմա էլ ահազանգերից ու անձնական խնդրանքներից բացի օգտաշատ տեղեկատվություն է ստացվում:

Նախարարը քաջ էր գիտակցում, որ արտակարգ իրավիճակների կառավարումն ու փրկարարությունը «թանկ հաճույքներ» են նույնիսկ զարգացած երկրների համար, և երկրի բյուջեն չի կարող օպերատիվ արձագանքել նախարարության հավակնոտ ծրագրերին, իսկ կառավարություններն ամբողջ աշխարհում աղետին արձագանքում են միայն դանակը ոսկորին հասնելուց հետո: Այդ իսկ պատճառով գլխավոր հանձնարարականներից մեկը միջազգային կառույցների, տարբեր երկրների համապատասխան ծառայություններին հետ համագործակցության ընդլայնմանն ու խորացմանն էր ուղղված: Անձամբ հանդիպեց մի շաբթ միջազգային կազմակերպությունների ղեկավարների, մեր երկրում հավատարմագրված դեսպանների հետ: Դրան զուգահեռ հիմնադրվեց աղետների ռիսկերի նվազեցման հիմնադրամ:

Հայաստանում աղետների ռիսկերի կառավարումն արդյունավետ դարձնելու նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ կազմակերպվել է ԱԻ նախարարության ստորաբաժանումների կարիքների գնահատում: Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեան բարձր գնահատեց ԱԻ նախարար Արմեն Երիցյանի նախաձեռնած ու արդեն իրականացրած քայլերը, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստանում աղետների կառավարման արդյունավետ համակարգ ունենալը խիստ իրատեսական է: Արտակարգ իրավիճակների նախարարությունը սկսել է ազգային պատճիռի ձևավորումը: Այն հնարավորություն կտա մշակելու երկրի ընդհանուր ռազ-



մավարությունը, որը կհամակարգի ԱԻՆ-ը՝ այդ աշխատանքներում ներգրավելով երկրի ամբողջ ներուժն ու միջազգային կապերը: Ընդ որում տարածաշրջանում առաջինը Հայաստանը կունենա իր ազգային պատճիռը:

Կատարվել են առաջին քայլերը, գնահատվել են կարողությունները, մատնանշվել են թերի ու բաց կողմերը, ուրվագծվել կարիքներն ու զարգացման ուղղությունները: Ամենաուժեղն ու հաջողակը նա է, ով գիտի՝ ինչ է ուզում, ով գիտի՝ ուր է գնում, հստակ պատկերացնում է իր հնարավորությունները, կարիքներն ու տեսլականը, գիտի իր կարողությունները, թերություններն ու բացառությունները, - ասաց ԱԻ նախարար Արմեն Երիցյանը:

Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պատճիռի քննարկմանը նվիրված աշխատանքային հանդիպմանը, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության տարբեր նախարարություն-գերատեսչությունների և երկրում ու տարածաշրջանում գործող մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը խոսեց ոչ միայն երկրի համար կարեւորագույն նշանակություն ունեցող այս նախաձեռնության, այլև դրա իրականացման ուղիների մասին:

Այս խնդիրը գտնվում է ազգային անվտանգության խորհրդի ուշադրության կենտրոնում երեք պատճառով: Առաջինը՝ այն նախատեսված է ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությամբ, երկրորդը՝ այն նախատեսված է Հայաստան-Եվրոպական Միություն՝ 2009-2011 թվականների ծրագրով, ինչպես նաև նախատեսված է Հայաստան-ՆԱՏՕ բարեփոխումների ծրագրով: Այս կապակցությամբ ես ուզում եմ ողջունել ՄԱԿ-ին, որը հանձն է առել նպատակները ՀՀ-ում աղետների ռիսկերի նվազեցման ժամանակակից համակարգի ձևավորմանը:

Նոր ծառայած խնդիրներից բացի, նորանկախ Հայաստանն այնքան վտանգավոր ժառանգություն է ստացել, որն անընդհատ հիշեցնում է իր մասին: Դրանցից մեկն էլ, նաև նախարարության շնորհիվ այդքան լայնորեն քննարկվող Նուբարաշենի թունաքիմիկատների խնդիրն էր: «Աշխարհի հետ համաքայլ, ժամանակին՝ համահունչ» կարգախոսը չի համադրվում հապաղում ու դանդաղ ընթացք: Տարիներ շարունակ ծամծմվող ու այրապես էլ լուծում չստացած թնջուկը կարիք ուներ մեկի, որը նախաձեռնություն հանդես կերթի, պատասխանատվությունը

կվերցնի իր վրա, կլինի հետևողական ու սկզբունքային՝ դրսևորելով լայնախոհություն ու պետական մտածողություն:

Շահագրգիռ նախարարություն-գերատեսչությունների հետ, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների ներգրավմամբ կազմակերպվեց բաց ու թափանցիկ, ամենակարևորը՝ շահագրգիռ ու արդյունավետ քննարկում: Արդյունքում՝ կառավարությունը միջոցներ հատկացրեց:

Արմեն Երիցյանի ջանքերով հիմնախնդիրը ոչ միայն կառավարության սեղանին դրվեց, այլև՝ համաշխարհային հանրության: Այսօր խնդրի առաջին՝ անվտանգության փուլը լուծվել է: Երկրորդը՝ ծածկվել է, շրջափակվել: Իսկ մնացած քայլերը՝ թունաքիմիկատների արտաբերման, տեղափոխման և ոչնչացման բարդ ու վտանգավոր աշխատանքները կազմակերպելու համար միջազգային մի շարք կազմակերպություններ ու երկրներ արդեն իսկ սեր երկրին աջակցելու իրենց համաձայնությունն են տվել: Վտանգաշատ այս խնդիրը պիտի լուծվի:

Արտակարգ իրավիճակների նախարարի գլխավոր մտահոգություններից մեկն էլ մեր բնակչության պաշտպանությունն է «ծեծած տեղը ծեծող» կարկուտից: Սթնուրտային երեսույթների վրա ակտիվ ներգործության ծառայությունը, որն առայժմ երկու հակակարկուտային ռադիոլոկացիոն կենտրոններ ունի՝ 42 կայաններով՝ Արարատի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում, գործարկման փուլում է եւս 28 կայանը Արարատի մարզում: Առաջիկայում նախատեսվում է տեղադրել եւս հիսուները: Լուրջ բարեփոխումներ են իրականացվում Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոնում՝ Հիդրոմետում: Իսկ Ռեզերվների գործակալությունում արմատական բարեփոխումներ են:

Միջազգային փորձագետները նշում են, որ աղետներից ամենաշատը տուժում է աղքատ բնակչությունը, իսկ այդտեղ իր անգնահատելի օգնությունը կարող է բերել աղետներից ապահովագրումը: Նոր համակարգը Հայաստանում ներդնելու համար Արմեն Երիցյանը հանդիպում ունեցավ Համաշխարհային բանկի փորձագիտական խմբի հետ, և շուտով Հայաստանին մոտ ինչո՞ք միլիոն դոլար կորած աղբյուրի՝ աղետներից ապահովագրությունը կայացնելու համար:

Այսօր Արտակարգ իրավիճակների նախարարությունն իր բոլոր կառույցներով ակտիվ ու դինամիկ շարժման մեջ է: 100 օրում այն արդեն ստեղծել է իր խորհրդանիշն ու դրոշմը, պետական ու գերատեսչական մեղալները, ունի նորակազմ իր նվազագիտումը, և սեպտեմբերի 4-ին ԱԻՆ աշխատակցի՝ փրկարարի օրը, տեղի կունենա ԱԻՆ նոր շենքի բացումը՝ հրշեջ-փրկարարների շքերթով, բազմաթիվ հյուրերով:

Արտակարգ իրավիճակների նախարարությունն արդեն իր հասցեն կունենա, որը հայտնի կլինի ոչ միայն մեր հանրապետությունում: Առջեւում հարյուրավոր օրեր են:



Մեր երազանքի նախարարությունը

Հունվարի 25-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Արտակարգ» քաղաքում տեղի ունեցավ նոր մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Քարեգին 2-րդը, կառավարության անդամներ, այլ բարձրաստիճան հյուրեր, օտարերկրյա գործընկերներ, պաշտոնատար անձինք եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ողջունեց հրապարակում շարված փրկարարներին, որից հետո սկսվեց նորակառույց շենքի օրհնության արարողությունը:

Շենքի բացման հանդիսավոր արարողությունն իրականացրեցին ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանը եւ Երեւանի քաղաքապետ Տ. Սարգսյանը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանի ուղեկցությամբ շրջեց նորակառույց շենքի հարկաբաժիններում եւ այցելեց ճգնաժամային կառավարման կենտրոն՝ ծանոթանալով ստորաբաժանումների գործունեությանը, աշխատանքային պայմաններին, տեխնիկական զինվածությանը եւ հնարավորություններին:

ՀՀ Նախագահի հանձնարարականի համաձայն՝ ճգնաժամային կառավարման կենտրոնում եւ «911» ծառայությունում ստեղծվել է 30 հաշմանդամի աշխատատեղ, եւ 11 հաշմանդամ ներկայումս փորձաշրջան է անցնում կենտրոնում:

Նոր շենքին ծանոթանալուց հետո ՀՀ Նախագահը շրջեց արտակարգ իրավիճակների արագ արձագանքման վրանային ճամբարում, որը հագեցած է փրկարարական աշխատանքների, աղետների բժշկության, կոմունալ-կենցաղային բոլոր հարմարություններով եւ տեխնիկական նորագույն միջոցներով (գորանոց, խոհանոց, բուժկետ, շարժական սառնարան, շարժական բաղնիք եւ այլն): Երկրի նախագահին ներկայացվեց նաեւ ԱԻՆ դաշտային հոսպիտալը:

Դավթաշենում վեր խոյացող Արտակարգ «քաղաքը» նոր շուք ու տեսք է ստանում: Մեկ հարկի տակ են հավաքվում նախարարության բոլոր ստորաբաժանումները

2012 թ. ՀՀ ԱԻ նախարարության համար նոր ձեռքբերումների տարի էր: Համակարգի բոլոր՝ թե հին, թե նորաստեղծ ստորաբաժանումներում գրանցվել է նկատելի առաջընթաց՝ աշխատանքի արդյունավետության բարձրացման ու տեխնիկական հագեցվածության առումով:

Նորագույն սեյսմակայուն շինարարության տեխնոլոգիաներով կառուցվել է ԱԻՆ նոր 9-հարկանի շենքը՝ համապատասխան միջազգային ընդունված չափանիշներին:

2012 թ. ընթացքում ծավալուն աշխատանքներ են իրականաց-



վել ճգնաժամային կառավարման կենտրոնի տեխնիկական եւ տեխնոլոգիական հագեցվածության եւ զարգացման ուղղությամբ: Հիմնվել է նախարարության հերթապահ ստորաբաժանումների տրանսպորտային միջոցների տեղաշարժի վերահսկման «GPS» համակարգը: Ներդրվել է մարդկանց զանգվածային կուտակման վայրերի տեսավերահսկման համակարգը: Կենտրոնին միացվել են Երեւան քաղաքի մետրոպոլիտենի տեսավերահսկման համակարգը՝ իր 11 կայարաններում տեղադրված 164 տեսախցիկներով: Կենտրոնում ներդրվել է տարածաշրջանում եզակի շենքերի, շինությունների, տարածքների հակահրդեհային ավտոմատացված վերահսկման եւ ազդարարման համակարգը: Ահազանգերի սպասարկման գործընթացների բարելավման նպատակով ներդրվել է Երեւան քաղաքում հասցեների որոնման եւ տեղորոշման ծրագրային համակարգը: Փրկարարական ստորաբաժանումների արձագանքման գործընթացների օպերատիվության բարձրացման նպատակով ներդրվել է հերթապահություն իրականացնող փրկարարական ստորաբաժանում-

ների շուրջօրյա տեսավերահսկման համակարգը: Գործարկվել է մարդուն հրատապ օգնության «911» ծառայությունը, որն անցած տարվա ընթացքում ստացել է ավելի քան 1.3 մլն ահազանգ: Ստեղծվել է արտակարգ իրավիճակների արագ արձագանքման վրանային ճամբարի հագեցած փրկարարական աշխատանքների, աղետների բժշկության, կոմունալ-կենցաղային բոլոր հարմարություններով եւ տեխնիկական նորագույն միջոցներով (գորանոց, խոհանոց, բուժկետ, շարժական սառնարան, շարժական բաղնիք եւ այլն): Հիմնվել է նախարարության պոլիկլինիկան: Այն համալրվել է ռենտգեն, ստոմատոլոգիական ռենտգեն, լաբորատոր սարքավորումներով, ավտոկլավով, ջրի թորման սարքով, հիվանդի զննման թախտերով, գործիքներով, անհրաժեշտ դեղորայքով եւ լաբորատոր նյութերով: Ստեղծվել է պոլիկլինիկայի էլեկտրոնային քարտադրամը: Առ այսօր սպասարկել է ավելի քան 600 ծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների: Մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայության գործունեության բա-

րելավման նպատակով ձեռք է բերվել 9 շարժական եւ 15 ստացիոնար հակակարկտային կայան եւ դրանց զագալցված համար նախատեսված 2 բեռնատար ավտոմեքենա: Ձեռք է բերվել ծանրաբարձ ամենագնաց (ջրոլող, լեռնագնաց, ճահճագնաց, թրթուրավոր 12 տոննա տարողությամբ), որը վերագինվել է դժվարմատչելի վայրերում հրդեհաշիջման բաբերով եւ սարքավորումներով, Ձեռք է բերվել 55 տեղանոց, 6 տոննա տարողությամբ բեռնախցիկով ավտոբուս, որը հագեցվել է փրկարարական սարքավորումներով եւ աշխատանքների կառավարման համապատասխան պայմաններով: Սեյսմիկ դիտացանցի արդիականացման եւ վերազինման նպատակով

- հայ-ճապոնական ծրագրով Երեւանի տարածքում տեղակայվել է 5 թվային սեյսմիկ դիտակայան.
- Ֆրանսիայի սեյսմոլոգիական ծառայության աջակցությամբ Հայաստանի տարածքում տեղակայվել է 9 սեյսմիկ դիտակայան.
- ԱԵՍԳ-ի աջակցությամբ ձեռք է բերվել 6 նորագույն սեյսմիկ կա-

յան ՀԱԵԿ-ի շրջակայքում տեղադրելու համար.

- ՄԱԶԾ աջակցությամբ ձեռք են բերվել ուժեղ երկրաշարժերի կանխատեսման թվային սարքավորումներ, որոնք տեղադրվելու են 15 հորատանցքերի վրա:

ՀՀ Նախագահի հանձնարարականի համաձայն՝ ճգնաժամային կառավարման կենտրոնում եւ «911» ծառայությունում ստեղծվել է 30 հաշմանդամի աշխատատեղ, եւ 11 հաշմանդամ ներկայումս փորձաշրջան է անցնում կենտրոնում:

ՀՀ ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը ձեռք է բերել վտանգավոր արտադրական օբյեկտների փորձաքննության համար նախատեսված շարժական լաբորատորիա:

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիայի «Լուսակերտ» ուսումնական կենտրոնում վերանորոգվել ու գործարկվել են ուսումնական վարժարանային սարքավորումներ ու լաբորատորիա:

Ձեռք են բերվել 16 ամենագնաց ավտոմեքենաներ, որոնցից 5-ը վերասարքավորվելուց եւ կահավորվելուց հետո տրամադրվել են մարզային ստորաբաժանումներին:

2012-2013 թթ.



ՆԱՏՕ-ն գնահատում է ՀՀ ԱԻՆ ձեռքբերումները

Դեկտեմբերի 10-ին Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի շտաբկայանում, տեղի ունեցավ աննախադեպ մի հանդիպում Ճեյուն ձեռագրով. ՆԱՏՕ-ի անդամ 28 երկրները՝ դեսպանների մակարդակով, Հայաստանի գործընկեր երկրների հետ հանդիպեցին ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանին: Զննարկման թեմաներն Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում Հայաստանի ձեռքբերումներն էին ու առաջացած կարիքները՝ կենտրոնանալով ճգնաժամային կառավարման կենտրոնի վրա:

հատեց Հայաստանի ներդրումն ու զգալի առաջընթացն աղետների ռիսկի նվազեցման եւ արձագանքման ոլորտում, նրա ակտիվ մասնակցությունը ՆԱՏՕ-ի կազմակերպած միջոցառումներին: Պարոն Էվանսը հատուկ շեշտեց Հայաստանում կազմակերպված Արմենիա 2010-ի ուսումնավար- ժության բարձր մակարդակը: ԱԻ նախարարը հակիրճ ներկայացրեց կատարած աշխատանքն ու բոլոր ուղղություններով համագործակցության, ՆԱՏՕ-ի անդամ ու գործընկեր երկրների հետ գործակցության իր տեսլականը: Նա հույս հայտնեց, որ Հայաստանն առավել ակտիվորեն կներգրավվի աղետների արձագանքման միջազգային գործողություններում:



Մինչ հիմնական հանդիպումը, Արմեն Երիցյանին ընդունեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի գործողությունների գծով ներկայացուցիչ, դեսպան Սթիվեն Էվանսը, որն աջակցում է Հյուսիս-Ատլանտյան հարիրոյին ու գլխավոր քարտուղարին ՆԱՏՕ-ի քաղաքական ուղղություններում եւ իրականացնում գործառնական գործողությունների կառավարում: Ընդունելությանը ներկա էր նաեւ Եվրամիության ղեկավարների արձագանքման համակարգման կենտրոնի (EADRCC) տնօրեն Գյունտեր Բրետշնայդերը: Դեսպան Էվանսը բարձր գնա- քականության ու գործառնականության, բարձր մակարդակի քաղաքական-նազանկան վարժանքների համար, նշեց, որ Հայաստանը լուրջ առաջընթաց է արձանագրել աղետների ռիսկի նվազեցման եւ արձագանքման, մասնավորապես՝ ճգնաժամային կառավարման ոլորտում, սակայն, ինչպես բոլոր զարգացող երկրները, ստիպված է հաղթահարել տնտեսական ու ֆինանսական լուրջ խոչընդոտներ: Մինչեւ նախարար Արմեն Երիցյանին խոսք տրամադրելը՝ նա մեկ անգամ եւս ՆԱՏՕ-ի անունից հավաստիացրեց, որ անպայմանորեն աջակցելու են Հայաստանին իր նախաձեռնություններում: Արմեն Երիցյանը ներկայաց-

րեց Հայաստանի ԱԻ կառավարման համակարգը, նրա զարգացման փուլերը, ԱՌՆ ոլորտում ձեռքբերումները, միջազգային արձագանքներն ու գնահատականները, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության փորձն ու սերտած դասերը, վաղվա տեսլականը: Կարելիք ուղերձն այն էր, որ Հայաստանն ունի իր հստակ պատկերացումներն արձանագրված թերությունների, կարիքների եւ վաղվա օրը մոտեցնելու ուղիների ու քայլերի մասին, վաղ թե ուշ կյանքի է կոչելու աղետակայուն երկիր ու աղետակայուն համայնք տեսլականը, իսկ միջազգային հանրության աջակցությունը Հայաստանի հզորացած ներուժը կարող է ծառայեցնել

հենց միջազգային գործողությունների արդյունավետության բարձրացմանը: Նախարար Երիցյանի զեկույցին հաջորդեց ԱԻՆ գործունեությունը ներկայացնող տեսախոլովակը, որից հետո նախարարին ուղղվեցին հարցեր, իսկ ավելի շատ հիացմունքի, գովեստի, խրախուսանքի ու երախտագիտության խոսքեր: ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ռուսաստանի եւ այլ երկրների ներկայացուցիչները դրական արձագանքներ հայտնեցին, որ ՀՀ ԱԻ-ը հուսալի գործընկեր է, եւ իրենք պատրաստ են շարունակել ու խորացնել համագործակցությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի ներկայացրած կարիքների ցանկի մանրամասն քննարկումից հետո յուրաքանչյուր երկրի հետ համագործակցել առանձին ծրագրերով: Նոր տարվա հենց սկզբից արդեն կսկսվեն ծրագրերի համատեղ մշակման գործընթացները: Սա ՀՀ ԱԻ-ի գնահատման հզոր, բոլորովին նոր ու բարձրագույն մակարդակ էր: Գերիշխող զգացողությունն էր՝ երկրիս համար, նրա կառավարման մարմինների զրազետ ու արդյունավետ գործունեության համար: 2012 թ., դեկտեմբեր

Առաջին դասընթացը՝ ԱԻ նախարարի մասնակցությամբ

2013 թ. հունվարի 11-ին ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանը հանդիպել է նախարարության համակարգում աշխատանքի մրցույթի նախնական փուլը հաղթահարած հաշմանդամներին: Հանդիպմանը ներկա էին նաեւ ԱԻՆ փրկարար ծառայության, տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի եւ ԱՌՆԱԴ հիմնադրամի տնօրենները, ինչպես նաեւ հաշմանդամների խնդիրներով զբաղվող «Ունիսոն» ԴԿ ղեկավարը:



քին կանոնակարգերն ու կրելով համազգեստ: Մեզ անհրաժեշտ են պատրաստակամ, պատասխանատու, աշխատասեր ու զրազետ մարդիկ, որոնցից լավագույնները կունենան առաջխաղացման հնարավորություն եւ կուղարկվեն արտերկիր՝ վերապատրաստման: Սկզբում, իհարկե, կարող են դժվարություններ լինել, սակայն հուսով եմ, որ մենք դրանք միասին կհաղթահարենք ու կգնանք առաջ: Անկաշկանդ միջավայրում անմիջական շփման ընթացքում նախարարն անհատապես ծանոթացավ աշխատանքի մրցույթի նախնական փուլն անցած հաշմանդամների հետ՝ հետաքրքրվելով նրանցից յուրաքանչյուրի կրթության, աշխատանքային փորձի եւ հետաքրքրությունների մասին: Մրցույթի այս փուլն անցած հաշմանդամների մեծ մասն ունի բարձրագույն կրթություն, աշխատանքային փորձ, տիրապետում են օտար լեզուների եւ համակարգչին: Դիմելով վերջիններիս հարազատներին, որոնք նույնպես ներկա էին

հանդիպմանը՝ ԱԻ նախարար Ա. Երիցյանը հավաստեց, որ ընդունվելով ԱԻՆ համակարգ՝ նրանց զավակները գտնվելու են հուսալի ձեռքբերում՝ ապահովված աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր պայմաններով եւ ստանալով պատշաճ վարձատրություն: Նախնական փուլում տրանսպորտի հետ կապված խնդրի լուծմանն աջակցում է «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը՝ «ԼՄՅՖ» ծրագրի շրջանակներում, որը ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության օգնությամբ իրականացնում է «Սեյվ դը Զիլդերեն» կազմակերպությունը: Հանդիպմանը իրավիճակում հաշմանդամները ծանոթացան նաեւ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնի եւ «911» ծառայության առաքելությանը, գործունեության սկզբունքներին եւ իրենց ապագա աշխատանքի առանձնահատկություններին: 2013 թ., հունվար

Կայացավ ԱՌՆԱԴ-ի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը

2012 թ. օգոստոսի 30-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դաիլիճում տեղի ունեցավ «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱԴ) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը, որը վարում էր ԱԻ նախարար Արմեն Երիցյանը: Նիստին մասնակցում էին ՀՀ ԱԻՆ ղեկավար կազմի, Ոստիկանության, ԶՈՒ գլխավոր շտաբի, Ֆինանսների ու Տարածքային կառավարման նախարարությունների, Ազգային անվտանգության խորհրդի եւ Հայաստանում Գերմանական կարմիր խաչի ներկայացուցիչներ: Օրակարգի հաստատումից հետո ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար Համլետ Մաթեոսյանը, հաշվի առնելով աղետների ռիսկի նվազեցման ոլորտում արտակարգ իրավիճակների նախարարության բազմամյա փորձը, որպես ԱՌՆԱԴ հիմնադրամի նախագահ առաջարկեց Արմեն Երիցյանի թեկնածությունը: Քվեարկության արդյունքներով Արմեն Երիցյանը միաձայն ընտրվեց ԱՌՆԱԴ հիմնադրամի նախագահ: ԱԻ նախարարը Հայաստանում Գերմանական կարմիր խաչի ներկայացուցիչ Մովսես Պողոսյանի թեկնածությունն առաջարկեց՝ որպես ԱՌՆԱԴ հիմնադրամի տնօրեն: Հարցը դրվեց քվեարկության եւ Մ. Պողոսյանը նույնպես միաձայն ընտրվեց ԱՌՆԱԴ հիմնադրամի տնօրեն: «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱԴ) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրվեց ՀՀ ԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Մարիամ Գեւորգյանը: Ազգային պլատֆորմը պետք է կարգավորող մեխանիզմի գործառնայի իրականացմի ԱՌՆ քաղաքականության մեջ, պլաններում ու զարգացման ծրագրերում ներառելու համար՝ որպես 2005-2015 թթ. Հյուզոնի գործողությունների շրջանակային ծրագրի (ՀԳՕ) իրագործման նպատակների հետ համապատասխանության հիմնական բաղադրիչ: ԱՌՆԱԴ-ի հիմնական նպատակն է օգնել ԱՌՆ ազգային համակարգի ստեղծմանն ու զարգացմանը՝ յուրաքանչյուր երկրի պահանջներին համապատասխան: 2012 թ. օգոստոս



արտակարգ իրավիճակների նախարարություն

Թունաքիմիկատների գերեզմանոցի հիմնախնդիրը

լուծում կստանա

Աջակցում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը

2010 թ. ապրիլին Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը սպառնում էր բնապահպանական լուրջ աղետի պատճառ դառնալ:

Այստեղ թաղված հսկայական քանակությամբ թունավոր նյութերը շտապ դուրսբերման են ոչնչացման կարիք ունեն: Բայց գործն ալնքան էլ հեշտ չէ, որքան թվում է: Ամեն ինչ անվտանգ ու բարձր մակարդակով անցկացնելու համար խոշոր գումարներ են պետք: ՀՀ ԱԻՆ նախարարությունը լուրջ քայլեր է ձեռնարկում անհրաժեշտ գումարները հայթայթելու եւ հարցը շուտափույթ լուծելու ուղղությամբ:

ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության կողմից ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ համատեղ մշակվել է Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքի ուսումնասիրման ծրագիր, որի ընթացքում պետք է պարզաբանվի տարածքի քիմիական իրավիճակը, վելուծություն կատարվի եւ արվեն առաջարկություններ՝ հետագա քայլերի վերաբերյալ:

Ապրիլի 12-ին ԵԱՀԿ-ից մասնագետների խումբ եկավ Հայաստանի փրկարար ծառայություն՝ թունաքիմիկատների գերեզմանոցի խնդիրը քննարկելու համար: Քննարկմանը մասնակցում էին տարբեր գերատեսչությունների, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ փորձագետ Ջոն Վիյգերը, ով իրավիճակը էր ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից՝ «Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի ոչնչացման գործընթացում աջակցելու» ծրագրի շրջանակներում:

Քննարկվեց Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում ստեղծված վիճակը, որը բնորոշվեց որպես արտակարգ իրավիճակ: Ստեղծված իրավիճակը կանխարգելելու նպատակով առաջարկվեց հնարավորինս սեղմ ժամկետում աշխատանքներ իրականացնել՝ արտաբերված թունաքիմիկատների վերաթաղման եւ ջրահեռացման համակարգի վերակազմման ուղղությամբ: Միջազգային փորձագետ Ջոն Վիյգերը առաջարկեց այդ աշխատանքների ֆինանսավորման համար Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից գործառնություններով դիմել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին:

տանքների ֆինանսավորման համար Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից գործառնություններով դիմել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ եւ ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչություն:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցն ստեղծվել է դեռ 1970-ական թվականներին: Բայց ստեղծողները ոչ տեղանքային պայմաններն են հաշվի առել, ոչ էլ անվտանգության կանոնները: Ուղղակի 5 մետրից էլ պակաս խորությամբ փոս են փորել, հետո տուրակներով եւ տարաներով մոտ 600 տոննա թունաքիմիկատը, հիմնականում ԴՊՏ, իրար վրա են լցրել եւ թաղել: Ու քանի որ տեղանքը ակտիվ սողանքային է, գերեզմանոցն իր վտանգավոր պարունակությամբ հանդերձ արդեն 30 տարի է սահում է ու սահում դեպի հարեւան տարածքները: Իսկ հարեւանները ոչ միայն Ջրաշեն, Վեդախիստ եւ Մուշավան գյուղերն են, այլեւ բնական ցորենի արգելանոցը: Տեղանքի երկարությունը 100 մ է, լայնությունը՝ 20 մ, խորությունը՝ 5 մետրից պակաս, մոտավոր ծավալը կազմում է 10000 մ³:

2008 թ. մայիսի 15-ին թաղված թունաքիմիկատների արտաբերման փաստ էր գրանցվել, որի մասին տեղեկացվել էր ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի տրեբուսի համայնքի բաժինը: Թունաքիմիկատների գերեզմանոց էր մտել ինժեներական տեխնիկա (համաձայն ոստիկանության եզրակացության՝ «Բելառուս» տրակտոր), փորվել էր երեք խոռոչ, որոնցից երկուսը հիստել էին թաղված թունաքիմիկատների վերին շերտին: Թունաքիմիկատները դուրս էին բերվել եւ ցրվել տարածքով: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ արտաբերված թունաքիմիկատները վերաթաղվել էին, վերականգնվել էր վնասված փշալարապատ հատվածը:

2010 թ. մարտի 4-ին Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքի ուսումնասիրության ժամանակ եւս հայտնաբերվել է թունաքիմիկատների արտաբերման փաստ: Թունաքիմիկատների գերեզմանոցի վերին շերտն ամբողջությամբ վնասված էր, վերին շերտում թաղված թունաքիմիկատները արտաբերվել էին ու ցրվել



տարածքում, շարքից դուրս էր բերվել ջրահեռացման համակարգը, տապալվել էին փշալարերի հենասյունները, դարպասը կտրվել էր: Տարածքին հասցվել էր զգալի բնապահպանական վնաս, ստեղծվել էր տարածքում արտակարգ իրավիճակի առաջացման իրական սպառնալիք: Փաստի վերաբերյալ ՀՀ ԱԻ նախարարությունը գործառնություն դիմել է ՀՀ ոստիկանապետին: Համաձայն փորձագետների նախնական եզրակացության՝ թաղված թունաքիմիկատների ոչնչացումը պետք է իրականացվի չորս փուլով:

Առաջին փուլում իրականացվելու են թունաքիմիկատների ոչնչացման նախնական աշխատանքները, որը ներառում է տարածքի երկրաբանական ուսումնասիրություն, գերեզմանոցի վերին հողաշերտի (1-2 մ) քիմիական անալիզի աշխատանքներ՝ հնարավոր վարակվածության առկայության պարզաբանման համար, թունաքիմիկատների մոնիթինգն եւ անալիզի կատարում, գերեզմանոցի մի քանի հատվածների բացման աշխատանքներ՝ թաղված թունաքիմիկատների տեսակավորման հնարավորությունների պարզաբանման նպատակով, մասնագիտական նախնական եզրակացություն՝ թունաքիմիկատների ոչնչացման հետագա աշխատանքների կատարման ձեւերի եւ հնարավորության վերաբերյալ:

Երկրորդ փուլում իրականացվելու են թունաքիմիկատների արտաբերման, տարավորման եւ տեղափոխման աշխատանքներ, որը ներառում է՝ թունաքիմիկատների գերեզմանոցի հարող տարածքում աշխատանքային հարթակի նախապատրաստում

եւ կոնունիկացիաների անցկացում, թաղված թունաքիմիկատների արտաբերում, արտաբերված թունաքիմիկատների տեղափոխում ժամանակավոր պահեստարան, թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքի ռեկուլտիվացիա:

Երրորդ փուլում իրականացվելու են արտաբերված թունաքիմիկատների բնորոշում (իդենտիֆիկացիա), փաթեթավորում եւ ոչնչացման տարբերակի ընտրություն:

Թունաքիմիկատների ոչնչացումն իրականացվելու է չորրորդ փուլում:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում առկա թունաքիմիկատներն դասակարգվում են որպես 1-ին եւ 2-րդ դասի վտանգավորության նյութեր: Ըստ փաստաթղթերի՝ Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում թաղված թունաքիմիկատները ծավալը շուրջ 512 տոննա է: Սակայն, արտաբերման աշխատանքների կատարման ընթացքում քանակը կարող է ավելանալ:

Այսպիսով, առաջին փուլը, այսինքն՝ գերեզմանոցի ուսումնասիրումն ու աշխատանքային ծրագրի կազմումն արդեն մեկնարկվել է, իսկ մնացած քայլերը՝ թունաքիմիկատների արտաբերման, տեղափոխման եւ ոչնչացման բարդ ու վտանգավոր աշխատանքները կազմակերպելու համար աջակցություն ստանալու նպատակով, ԱԻ նախարար Արմեն Երիցյանի գլխավորությամբ կրկին այցելել են թունաքիմիկատների գերեզմանոց, տեղում մեկ անգամ եւս զննատեղ իրավիճակը, տրվել են կոնկրետ հանձնարարականներ:

ԵԱՀԿ-ն իր փորձագիտական մեծ խնդրով ԵԱՀԿ փոխդեսպան Կարել Յոնստրաայի գլխավորությամբ եւ հայկական կողմը ԱԻ նախարար Արմեն Երիցյանի գլխավորությամբ կրկին այցելել են թունաքիմիկատների գերեզմանոց, տեղում մեկ անգամ եւս զննատեղ իրավիճակը, տրվել են կոնկրետ հանձնարարականներ:

Միջազգային մի շարք կազմակերպություններ արդեն իսկ իրենց համաձայնությունն են տվել աջակցելու մեր երկրին վտանգազատ այս խնդիրը լուծելու համար:


2010 թ., ապրիլ

Գազալցման շարժական կայանների գործունեությունը մայրաքաղաքի տարածքում Երևանի քաղաքապետն արգելել էր դեռ 2002 թվականին: Սակայն մինչ 2010 թ. հունիսը մայրաքաղաքում տասնյակ ման լցակայաններ էին գործում: ԱԻ նախարարության մասնագետների հաշվարկներով խոշորները 23-ն են:

- Դրանք շատ վտանգավոր են, պայթելու դեպքում կարող են 5-7 կմ շառավղով ավերածություններ գործել, - ասում է ՀՀ ԱԻՆ Տեխնիկական անվտանգության կենտրոնի Երևան քաղաքի փորձագիտական ծառայության պետ Վլադիմիր Հովսեփյանը:

Շարժական գազալցակայանների հենց այս վտանգավորությունը հաշվի առնելով՝ ԱԻ նախարար Արմեն Երիցյանը վճռական քայլերի դիմեց: Հունիսի 30-ին հրավիրված խորհրդակցության ժամանակ նա Հայաստանի փրկարար ծառայության Պետական հրդեհային տեսչությանն ու Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնին հանձնարարեց շրջայցեր կատարել ու դադարեցնել Երևանում գործող բոլոր շարժական գազալցակայանների աշխատանքը:

- Եթե դրանք պայթեն, կլինեն բազմաթիվ զոհեր ու ավերածություններ, ու մեզ մերող չի լինի: Մենք պարտավոր ենք բնակչությանն ազատել այդ վտանգից: Երևանում ոչ մի շարժական գազալցակայան չպիտի գործի, դրանից հետո արդեն կանդադարանաք ստացիոնարներին, տեսնենք՝ մորմա՞լ են, ունե՞ն թույլտվություն, թե ոչ, -



ասաց ԱԻ նախարար Արմեն Երիցյանը:

Շարժական եւ ստացիոնար գազալցակայաններում ամեն տարի էլ արտակարգ պատահարներ լինում են: 2008թ. գրանցվել է 14 դեպք, որից 4-ը՝ մահացու ելքով, 4-ը՝ ծանր վնասվածքով: 2009թ. գրանցվել է 3 դեպք, որից 1-ը՝ մահացու ելքով, 1-ը՝ ծանր վնասվածքով: 2010թ. 1-ին կիսամյակում գրանցվել է 2 դեպք, 1-ը՝ մահացու ելքով:

2010 թվականին գազի պայթյունից առաջին զոհը Արարատի Այգավան գյուղում գտնվող ստացիոնար գազալցակայանի աշխատող Կարո Գեորգյանն էր: Պայթյունի պատճառը լիցքավորվող «ՈԱՏ» մակնիշի մեքենայի բալոնն էր, որը մաշված էր ու նախատեսված էր ոչ թե բնական սեղմված գազի, այլ ամոնիակի, թթվածնի եւ այլ գազերի համար:

Մեկ դեպք էլ եղել էր ԱԻ նախարարի իրավիճակի խորհրդակցությունից մեկ օր

Երևանում շարժական գազալցակայանների գործունեությունն արգելվում է

առաջ: Հունիսի 29-ին ժամը 9.30-ի սահմաններում Կոտայքի մարզի Ջովուհի գյուղի վարչական տարածքում գործող «Սամսոն Սամսոնյան» ՍՊԸ-ին պատկանող ստացիոնար գազալցակայանում պայթել էր «Գազել» մակնիշի երթուղային հարվածել էին պատին, որը, սակայն, չէր փլվել: Չոհեր ու վիրավորներ բարեբախտաբար չեն եղել:

Հետագայում արտակարգ պատահարներից ու զոհերից խուսափելու համար ԱԻ նախարար Արմեն Երիցյանը կարգադրեց անմիջապես գործի անցնել: Օպերատիվ խմբերը սկսեցին շրջայցերը:

Առաջինը տեսուչներն այցելեցին «Փեթթակ» տոնավաճառի մոտ գտնվող բնական գազի շարժական լցակայան: Ինչպես պարզվեց՝ գործունեության թույլտվություն չունի, Արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստրում գրանցված չէ: Տեսուչներն այստեղ դիմադրության չհանդիպեցին. մի քանի րոպե, ու աշխատանքն արդեն դադարեցված է: Նույնը եղավ նաեւ «Գորվեդկա» կոչվող թաղամասում գործող մի գազալցակայանի հետ: Ինչպես Երևանում գործող մյուս շարժական կայաններում, այստեղ մույնպես հրդեհային անվտանգության ոչ մի կանոն պահպանված չէր, գտնվելու վայրը համաձայնեցված չէր ԱԻՆ ՀՓԾ պետական հրդեհային տեսչության հետ:

- Խախտումները բազմաթիվ են, - ասաց ԱԻՆ ՀՓԾ Պետական հրդեհային տեսչության քարոզչության բաժնի պետ Սերգեյ Հայրապետյանը, - մասնավորապես, պահպանված չեն միջտարածություններ, կրակմարիչներ չկան, շանթարգել պիտի լինի, ջրացանց պիտի լինի, որ հրդեհի դեպքում հնարավոր լինի մարել այն:

Տեսուչների խմբերից մեկը եղավ նաեւ Հարավ-արեւմտյան թաղամասում, այստեղ գործող շարժական գազալցակայանի աշխատողը քարոզեց իր այն, որ կայանի գործունեությունն անօրինական է, առաջին անգամ էր լսում: Հետո էլ սկսեց արդարանալ, թե զգուշացնելու ժամանակ ինքը տեղում չի եղել:

ՀՀ ԱԻՆ աշխատակիցներից կազմված խմբերը հունիսի 30-ին դադարեցրեցին Երևանում գործող բոլոր շարժական գազալցակայանների գործունեությունը: Դրանց բոլորի աշխատանքը նախորդ օրը նկարահանվել էր, ու մի քանիսը, երեւի զգալով վերահաս վտանգը, տեսուչների այցելության պահին անհետացել էին կամ ինքնակամ դադարեցրել աշխատանքը:

Երևանում գործող գլուխ բերելուց հետո նախարարությունն իր ուշադրությունը կենտրոնացնելու է նաեւ մարզերում գործող գազալիցքավորման շարժական կայանների վրա:

2010 թ., հունիս



Երեւանը միացավ

«Իմ քաղաքը պատրաստվում է» արշավին

2011 թ. ապրիլի 22-ին Երեւանում Արտակարգ իրավիճակների նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նախաձեռնությամբ, կայացավ միջազգային հանդիպում, որի թեման էր «Աղետների ռիսկի նվազեցման համակարգի զարգացումը Հայաստանում»:

Միջազգային հանդիպման նպատակն էր ներկայացնել Հայաստանում Հյուսիսային Գոլդեն Գործողությունների ծրագրի իրականացումն ու ապակենտրոնացումը, Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանի մասին (ԱՌՆԱՊ) ելույթներն ու աշխատանքը, ինչպես նաև ՄԱԿ-ի «Իմ քաղաքը պատրաստվում է» համաշխարհային արշավը:

Հանդիպման սկզբում մասնակիցները 1 րոպե լռությամբ հարգեցին մարտի 11-ին ճակատագրալից անվտանգության քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշեց, որ աղետների ռիսկի նվազեցումը երկրի զարգացման կարևորագույն ուղղություններից է:

- Չմոռանա՞նք, որ Հայաստանն աղետներից տուժած երկիր է, և յուրաքանչյուր տարի մեր երկրին շարունակվում են սպառնալ տարբեր աղետներ: Այս առումով չափազանց կարևոր է, որ մեր երկրում մշակվի և ներդրվի աղետների ռիսկի նվազեցման միացյալ ռազմավարություն, որը կհամապատասխանի ժամանակակից միջազգային չափանիշներին: ՀՀ ԱԻՆ և ՄԱԿ-ի համագործակցությունը կարող է հիմք դառնալ այս ոլորտում լուրջ ձեռքբերումներ արձանագրելու համար: ԱՌՆԱՊ-ի հիմնադրումը և լավագույն միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ժամանակին կանխատեսել վտանգները, մշակել միջոցառումները հստակ ծրագիր, ունենալ պատասխանատուներ և ժամանակացույց, որպեսզի հետամուտ լինենք այդ ամենը կյանքի կոչելու:

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեանը նշեց աշխարհում տեղի ունեցող աղետների թվի մտահոգիչ աճը: - Վիճակագրությունը ցույց է տալիս, որ միայն անցյալ տարվա ընթացքում աշխարհում տեղի է ունեցել 373 բնական աղետ, որոնց հետեւանքով մահացել է 296 800 մարդ: Հայաստանը նույնպես ենթակա է բազմաթիվ աղետների: Այդ պատճառով չափազանց կարևոր է, որ կառավարությունը, հասարակական ու միջազգային կազմակերպությունները միավորեն իրենց ջանքերը աղետների ռիսկերը նվազեցնելու համար:

Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը նույնպես կարևորեց աղետների ռիսկերը նվազեցնելու համար:



ներդրեց աղետների ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ ջանքերի միավորումն ու գործի կարելու թյունը գիտակցումը:

- Մի այսպիսի խոսք կա. ասում են՝ ինչո՞ւ է խելոք մարդը տարբերվում հմուտ մարդուց: Խելոք մարդը կարողանում է դուրս գալ արտակարգ իրավիճակից, իսկ հմուտը՝ չի հայտնվում նման իրավիճակներում: Ժամանակն է, որ պետք է մենք էլ խելոքից անցնեք հմուտ մարդու կարգավիճակին: Թե՛ երկրի, թե՛ քաղաքների, թե՛ այլ կառույցների կառավարիչները պետք է կարողանան կանխատեսումներ անել և պատրաստ լինել ամենատարբեր իրավիճակների:

ԱՒ նախարար Արմեն Երիցյանի խոսքով՝ ազգային պլանի մասին, որը Հյուսիսային Գոլդեն Գործողությունների ծրագրի առաջին պահանջներից մեկն է, նախարարության 2010 թ. կարևոր ձեռքբերումներից է:

- Աղետներն այսօր լուրջ մարտահրավեր են ամբողջ աշխարհի համար: Արտակարգ իրավիճակների նախարարությունը նույնպես պատրաստվում է «Իմ քաղաքը պատրաստվում է» խորագրով համաշխարհային արշավը:

Մեր նախարարությունը նույնպես քայլեր է ձեռնարկում դրանց դիմակայելու ուղղությամբ, և մենք միասին փորձում ենք կառուցել աղետակայուն երկիր: Բոլորն էլ հասկանում են, որ բնության հզոր տարերքին ոչ մի պետություն չի կարող միայնակ դիմակայել: Այդ պատճառով էս կարևոր են համարում ԱՌՆ պլանի մասին ստեղծումը: Վերջին տարիներին աշխարհում շատ խոշոր աղետներ են գրանցվել, սակայն էս միշտ բերում են Չիլիում և Հայթիում տեղի ունեցած երկրաշարժերի օրինակը: Այդ երկրներում գրանցվեցին ուժեղ, գրեթե նույն մագնիստուդով երկրաշարժեր: Սակայն Չիլիում զոհվեց 300 մարդ, իսկ Հայթիում՝ մոտ 300 հազար: Սա նշանակում է, որ Չիլիում ավելի պատրաստված էր, աղետակայուն երկիր էր, և մենք էլ պետք է գնանք այդ ճանապարհով, - նշեց ԱՒ նախարար Արմեն Երիցյանը:

Հանդիպման ընթացքում ՀԳԾ ազգային համակարգող Նիկոլայ Գրիգորյանը ներկայացրեց ԱՌՆ

ՄԱՊ-ի գործունեությունը և Հյուսիսային Գոլդեն Գործողությունների ծրագրի իրականացումը Հայաստանում: Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանի մասին ստեղծվել է անցյալ տարի՝ հիմնադրամի տեսքով և առաջինն է տարածաշրջանում:

ԱՒՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար Հանելտ Մաթեոսյանն իր զեկույցում ներկայացրեց 2010-2011 թթ. ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարության նախաձեռնությամբ իրականացվող «Իմ քաղաքը պատրաստվում է» խորագրով համաշխարհային արշավը: Այս ծրագրին, որի նպատակը քաղաքային համայնքների աղետակայունությունն է բարձրացնելն է, արդեն միացել է 634 քաղաք: Միջոցառման ընթացքում մեր մայրաքաղաքը նույնպես միացավ այդ արշավին, ինչը հավաստեց քաղաքապետ Կարեն Կարապետյանի ստորագրած վկայագիրը:

Հանդիպմանը ներկա միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները բարձր գնահատեցին ԱՒՆ-ի վերջին մեկ տարվա աշխատանքը և նշեցին, որ ամեն կերպ կաջակցեն իրենց հայ գործընկերներին աղետակայուն պետություն կառուցելու ճանապարհին:

«Իմ քաղաքը պատրաստվում է» խորագրով համաշխարհային արշավին միանալու կարգին կարող եք տեղեկանալ www.emergency.am կայքից:

2011 թ., ապրիլ

Հայաստանում կստեղծվի ԱՒ մարդասիրական փարածաշրջանային կենտրոն

2012 թ. հոկտեմբերի 16-ին Մոսկվայում ՀՀ ԱՒ նախարար Արմեն Երիցյանը հանդիպել է Ռուսաստանի Դաշնության իր գործընկեր Վլադիմիր Պուլկովին: Հանդիպման ընթացքում նախարարները ստորագրել են մարդասիրական արձագանքման հայ-ռուսական կենտրոնի ստեղծման մասին մտադրությունների արձանագրություն: Այդ կենտրոնի հիմնական խնդիրն արտակարգ իրավիճակներում մարդասիրական արձագանքման ապահովումն է:

արդետների և հետեւանքների վերացման մասին կնքվելիք համաձայնագրի իրականացման գործում մեխանիզմ:

Այսուհետ ՌԴ ԱԻՆ ճգնաժամային իրավիճակներում կառավարման ազգային կենտրոնի և ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնի միջև լինելու է տեղեկատվության ամենօրյա փոխանակում: Երկրները նաև ակտիվ կերպով զարգացնելու են երկրաշարժերի և ցունամիների մշտադիտարկման և կանխատեսման

Դեռևս 2009 թ. նոյեմբերին ՀԱՊԿ անդամ երկրների արտակարգ իրավիճակները համակարգող խորհրդի 2-րդ նստաշրջանի ընթացքում Մոսկվայում ստորագրվել է ՌԴ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների ու տարերային աղետների հետեւանքների վերացման և ՀՀ ԱԻՆ միջև համագործակցության զարգացման վերաբերյալ արձանագրություն:

ՌԴ ԱՒ նախարարը նշել է, որ ներկայումս իրականացվում է մի քանի համատեղ նախագիծ՝ հիշատակելով այս տարվա սեպտեմբերին Հայաստանում անցկացված ՀԱՊԿ «Փոխգործակցություն 2012» գորավարժությունը, որին մասնակցում էին ՀԱՊԿ անդամ երկրների զինված ուժերի, ոստիկանության և արագ արձագանքման ուժերը: Վ. Պուլկովը խոսել է նաև 2010 թ. ամռանը Ռուսաստանի տարածքում բռնկված լայնածավալ անտառային հրդեհների դեմ պայքարում ՀՀ ԱԻՆ ցուցաբերած օժանդակության մասին: Ռուսաստանը մեկ անգամ չէ, որ մարդասիրական օգնություն է ցուցաբերել Հայաստանին, իսկ ներկայումս ՌԴ ԱԻՆ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանում է ՀՀ ԱԻՆ 4 աշխատակից:

Քիչ առաջ հեռախոսով կապվեցինք Մոսկվայում աշխատանքային այցով գտնվող ՀՀ ԱՒ նախարար Ա. Երիցյանի հետ, որն իր գոհունակությունը հայտնեց Ռուսաստանի իր գործընկերոջ հետ համոզիպունից: Վ. Պուլկովը հաճույքով է ընդունել Հայաստան այցելելու Ա. Երիցյանի հրավերը:

Նշելով, որ հիմք է դրվել շատ լուրջ ու ծանրակշիռ համագործակցության Արմեն Երիցյանը հայտնեց, - Երբ Բելառուսում քննարկեցինք տարածաշրջանի մարդասիրական կենտրոններ ստեղծելու գաղափարը, իմ առաջարկը հավանության արժանացավ, - նշեց Ա. Երիցյանը, - մի կենտրոն կստեղծվի Հայաստանում, մյուսը՝ Բելառուսում: Հենց երեկ Ռուսաստանի ԱՒ նախարարությունում աշխատասենյակ տրամադրվեց համատեղ հանձնաժողովում ընդգրկված ՀՀ ԱԻՆ ներկայացուցիչներին: Համատեղ իրաման ստորագրեցինք նաև, որ մեր երկրների ճգնաժամային կառավարման կենտրոններն ամենօրյա ռեժիմով տեղեկատվություն փոխանակեն: Այս համագործակցությունը մեծ հեռանկարներ ունի և հիմնական աշխատանքները դեռ առջևում են:

Նշելով, որ հիմք է դրվել շատ լուրջ ու ծանրակշիռ համագործակցության Արմեն Երիցյանը հայտնեց, - Երբ Բելառուսում քննարկեցինք տարածաշրջանի մարդասիրական կենտրոններ ստեղծելու գաղափարը, իմ առաջարկը հավանության արժանացավ, - նշեց Ա. Երիցյանը, - մի կենտրոն կստեղծվի Հայաստանում, մյուսը՝ Բելառուսում: Հենց երեկ Ռուսաստանի ԱՒ նախարարությունում աշխատասենյակ տրամադրվեց համատեղ հանձնաժողովում ընդգրկված ՀՀ ԱԻՆ ներկայացուցիչներին: Համատեղ իրաման ստորագրեցինք նաև, որ մեր երկրների ճգնաժամային կառավարման կենտրոններն ամենօրյա ռեժիմով տեղեկատվություն փոխանակեն: Այս համագործակցությունը մեծ հեռանկարներ ունի և հիմնական աշխատանքները դեռ առջևում են:

Հրշեջ մասը սպասարկելու է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանները: Չորսհարկանի շենքի 3-րդ հարկում կտեղակայվի նաև ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Երեւանի փրկարարական վարչության Կենտրոն բաժինը, իսկ 4-րդ հարկում՝ ԱԻՆ նվազախումբը: Բակում կառուցվել է նոր հիդրանտ, դրանից բացի՝ հրշեջ մասն ապահովված է 16 եւ 25 տոննա տարողությամբ ստորգետնյա երկու ջրավազաններով: Շենքում կա մարզադահլիճ, կաթսայատուն, բաղնիք, խոհանոց, ճաշարան և հանգստի սենյակներ, որոնք ամբողջությամբ կախավորվել են նոր կահույքով: Կա նաև օդափոխման և զազահեռացման համակարգ: Այստեղ ծառայություն են իրականացնելու 1 ավտոսանրուղի և տարբեր ջրատարողության 3 հրշեջ ավտոմեքենա:

Նոր շենք՝ Երեւանի թիվ 8 հրշեջ մասի համար

Սեպտեմբերի 4-ին նշվող ԱՒ աշխատողի օրվա միջոցառումների շարքում 2012 թ. Երեւանի Մյասնիկյան 1 հասցեում տեղի ունեցավ թիվ 8 հրշեջ մասի նորակառույց վարչական շենքի բացման արարողությունը:



Հրշեջ մասը սպասարկելու է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանները: Չորսհարկանի շենքի 3-րդ հարկում կտեղակայվի նաև ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Երեւանի փրկարարական վարչության Կենտրոն բաժինը, իսկ 4-րդ հարկում՝ ԱԻՆ նվազախումբը:

Բակում կառուցվել է նոր հիդրանտ, դրանից բացի՝ հրշեջ մասն ապահովված է 16 եւ 25 տոննա տարողությամբ ստորգետնյա երկու ջրավազաններով: Շենքում կա մարզադահլիճ, կաթսայատուն, բաղնիք, խոհանոց, ճաշարան և հանգստի սենյակներ, որոնք ամբողջությամբ կախավորվել են նոր կահույքով: Կա նաև օդափոխման և զազահեռացման համակարգ: Այստեղ ծառայություն են իրականացնելու 1 ավտոսանրուղի և տարբեր ջրատարողության 3 հրշեջ ավտոմեքենա:

2012 թ., Սեպտեմբեր

